ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 76 - Լ

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» օրենքի 32-րդ և «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի 21-րդ հոդվածների 7-րդ մասերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել հատուկ միջոցները ոստիկանության և ոստիկանության գվարդիայի ծառայողներին հատկացնելու, պահպանելու և դրանց պիտանիությունը պարբերաբար ստուգելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ
28.10.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«28» հոկտեմբերի 2025թ.
N 76 - Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՍՏՈՒԳԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են հատուկ միջոցները ոստիկանության և ոստիկանության գվարդիայի (այսուհետ՝ ոստիկանություն) ծառայողներին հատկացնելու և դրանց պահպանման ու պիտանիության պարբերաբար ստուգման հետ կապված հարաբերությունները:

2. Ոստիկանության ծառայողներին կարող են հատկացվել բացառապես «Ոստիկանության մասին» օրենքի 32-րդ հոդվածի և «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված հատուկ միջոցները:

3. Արգելվում է ոստիկանության ծառայողներին հատկացնել ոստիկանության սպառազինության մեջ չընդգրկված հատուկ միջոցներ:

2. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

4. Հատուկ միջոցները հատկացվում են ոստիկանության այն ծառայողներին, ովքեր անցել են դրանց կիրառման հմտություններին տիրապետելու հատուկ պատրաստություն և պարբերական վերապատրաստում:

5. Ձեռնաշղթաները, կապող ցանցերը, մահակները, էլեկտրահարող սարքերը, կայծային պարպիչները, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակները, ծառայողական շները, նույնականացնող կամ տարբերակող ներկող նյութերը ոստիկանության ծառայողներին հատկացնելու թույլտվություն տալիս են ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների ենթակա ստորաբաժանումների պետերը:

6. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը, ձեռքի ծխանռնակները, ծխագլանակները, ծխային կրակոցները և արկերը, արգելքներ քանդող գործիքները (սարքերը) և տեխնիկան, մարդկանց և տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու (արգելափակելու) տեխնիկական պատնեշները, ճանապարհային ոզնիները և փշալարերը, ջրանետերը, այդ թվում՝ հատուկ ներկող նյութերի օգտագործմամբ, զրահամեքենաները, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը, ռետինե գնդակներով փամփուշտները ոստիկանության ծառայողներին հատկացնելու թույլտվություն տալիս են ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների պետերը կամ նրանց տեղակալները:

7. Հատուկ միջոցները ոստիկանության ծառայողներին հատկացվում են հատուկ միջոցների հաշվառման մատյանում (ձև 1) համապատասխան գրառում կատարելուց հետո՝ ստացող ծառայողի ստորագրությամբ:

8. Հերթապահության ավարտից կամ առաջադրանքի կատարումից հետո ոստիկանության ծառայողը հատուկ միջոցները հանձնում է ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հերթապահ մաս կամ սպառազինության պատասխանատու ծառայողին, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում հատուկ միջոցների հաշվառման մատյանում:

3. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

9. Հատուկ միջոցները պահվում են ոստիկանության ստորաբաժանումների հերթապահ մասերի հատուկ պահասենյակներում՝ մետաղական արկղերում, դարակաշարերի վրա կամ պայուսակներում՝ փաթեթավորված վիճակում, բացառությամբ տեխնիկա և տրանսպորտային միջոց հանդիսացող ու մեծ չափերի հատուկ միջոցների, ինչպես նաև ծառայողական շների, որոնք պահվում են դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում կամ շինություններում:

10. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակները, կրակոցներն ու արկերը, ձեռքի ծխանռնակները, ծխագլանակները, ծխային կրակոցները և արկերը, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը, ինչպես նաև դրանց գործադրման հատուկ սարքերը պահվում են մարտական զենքի համար սահմանված կանոններին համապատասխան:

11. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը, ձեռքի ծխանռնակները, ծխագլանակները, ծխային կրակոցները և արկերը, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը պահվում են իրենց հաստիքային արկղերում, իսկ պայթուցիչները՝ հերմետիկ փակված առանձին խողովակատուփերում՝ արկղի մեջ:

12. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը, ձեռքի ծխանռնակները, ծխագլանակները, ծխային կրակոցները և արկերը, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը, էլեկտրահարող սարքերը, կայծային պարպիչները, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակները պահվում և տեղափոխվում են հրդեհավտանգ ու բռնկվող նյութերից, ինչպես նաև պայթուցիկ սարքերից առանձին:

13. Տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու ճանապարհային ոզնիները և փշալարերը պահվում են չոր պահասենյակներում՝ գործարանային փաթեթավորման մեջ:

14. Հերթապահ մասերում պահվող հատուկ միջոցների պահպանության համար անմիջական պատասխանատվություն են կրում հերթապահ մասերի պետերը, իսկ այլ տարածքներում կամ շինություններում պահվող հատուկ միջոցների պահպանության համար՝ սպառազինության պատասխանատու ծառայողները:

4. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՍՏՈՒԳՈՒՄԸ

15. Հատկացված հատուկ միջոցները ընդունվում, հսկվում և պարբերաբար ստուգվում են համապատասխան ստորաբաժանման պետի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ առաջին ստուգումը կատարվում է ընդունման ժամանակ, իսկ հետագայում՝ ամիսը մեկ անգամ:

16. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակների, կրակոցների և արկերի, ձեռքի ծխանռնակների, ծխագլանակների, ծխային կրակոցների և արկերի, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակների, կրակոցների և արկերի ընդունման ժամանակ ստուգվում են դրանց առկայությունը, արտաքին տեսքը և պահպանման ժամկետները:

17. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակների, կրակոցների և արկերի, ձեռքի ծխանռնակների, ծխագլանակների, ծխային կրակոցների և արկերի, արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակների, կրակոցների և արկերի ընդունման ժամանակ արկղերը պարտադիր բացվում, իսկ դրանցում առկա հատուկ միջոցները հատ-հատ ստուգվում են՝ արտաքին վնասվածքները բացառելու նպատակով: Ստուգված հատուկ միջոցները տեղադրվում են արկղի մեջ, իսկ արկղը կնքվում է: Պայթուցիչների հերմետիկ փակված խողովակատուփերը ընդունելուց չեն բացվում, սակայն համեմատվում են դրանց վրա եղած գրառումները:

18. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակների ընդունման ժամանակ ստուգվում է սրվակների քաշը՝ կշռելու եղանակով:

19. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակների նոր խմբաքանակի ստացման ժամանակ սրվակների վրա թանաքով կատարվում է հերթական համարի նշագրում և ստուգվում է դրանց աշխատունակությունը:

20. Աշխատունակության ստուգումը կատարվում է բաց տարածքում՝ սրվակի փոշեցրման գլխիկը կարճ ժամանակով սեղմելու միջոցով (մեկ վայրկյանից ոչ ավելի): Փոշեցրման գլխիկի անցքից պետք է դուրս նետվի՝ 50 սմ հեռավորության վրա տեսանելի օդակաթիլային ամպ: Եթե սեղմումից հետո օդակաթիլային փոշեցրումը տեսանելի չէ կամ սրվակի պարունակությունը դուրս է նետվում հեղուկի շթի տեսքով, կամ գլխիկի բացթողնումից հետո շարունակվում է արտանետումը, ապա նման սրվակն օգտագործման ենթակա չէ: Օգտագործման ենթակա չեն նաև այն սրվակները, որոնց քաշը պակաս է 50 գրամից:

21. Օգտագործման համար ոչ պիտանի, այդ թվում՝ ժամկետանց հատուկ միջոցները ցուցակագրվում և առանձնացվում են հանձնաժողովի կողմից կազմված հատուկ արձանագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացման նպատակով:

Ձև 1

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ

Հ/հ	Հատուկ միջոցի անվանումը	Հատկացնելու ամսաթիվը	Քանակը	Հատկացնելու նպատակը	Ստացողի անունը, ազգանունը և ստորագրությունը	Հատկացնողի անունը, ազգանունը և ստորագրությունը	Վերադարձնելու ամսաթիվը	Հանձնողի անունը, ազգանունը և ստորագրությունը	Ընդունողի անունը, ազգանունը և ստորագրությունը	Օգտագործման ամսաթիվը	Թույլատրված է (ում) հրամանով, ամսաթիվը և համարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12